ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 26 >> մայիս 2017թ N 47

ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի մայիսի 18-ի N412-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝

1) Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ (ծածկագիր՝ 69-2.2-18).

2) Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 69-2.3-20).

3) Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 69-2.3-21).

4) Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 69-3.1-14).

2. Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-4) անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 4-րդ կետից հանել <<Վարչության կրթության բաժնի պետը և>> բառերը,

2) 5-րդ կետի առաջին պարբերության <<Վարչության կրթության բաժնի պետը, Վարչության գլխավոր մասնագետը>> բառերը փոխարինել <<Վարչության գլխավոր մասնագետներից մեկը>> բառերով,

3) 5-րդ կետի երկրորդ պարբերության <<Վարչության կրթության բաժնի պետի, Վարչության գլխավոր մասնագետի>> բառերը փոխարինել <<Վարչության գլխավոր մասնագետներից մեկի>> բառերով.

3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-1) անձնագրի 5-րդ կետի երկրորդ պարբերությունից հանել <<Աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետի, >> բառերը:

4. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի փետրվարի 23-ի N10 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետի (ծածկագիր՝ 69-2.2-18) (հավելված15),

2) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի ապրիլի 26-ի N39 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետի (ծածկագիր՝ 69-2.2-23) (հավելված1),

3) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի ապրիլի 26-ի N39 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 69-2.3-19) (հավելված2),

4) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի ապրիլի 26-ի N39 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 69-3.2-25) (հավելված3)

քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ